

## Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

39) ՆԱՐ-ԴՈՍ „Տանխրոջս աղջիկը“ վրայակ, 90 էր., Թիֆլիս,  
դ, 20 կ.

Նար-Դոսի վէպիկը, կամ, ինչպէս ինքն անուանել է, վիպակը կարգացուած է հետաքրքրութեամբս։ Վէպիկի նիւթը վերջորած է իրականութիւնից և մշակուած է ոչ առանց շնորհքի։

Վէպի հերոսունին մի թիֆլիսցի օրիորդ է՝ ծագումով հայ, կրթութեամբ՝ կէս-վրացի, կէս-ուս. Գիմնազիան նա նոր է աւարտել և ուրեմն գիտէ, ինչպէս Շչեղրինն ասում էր, «մի քիչ թուաբանութիւն, մի քիչ դիպարանութիւն (օրինակ, որ «ամառը» սիրոյ աստուածն էր) և մի քիչ երաժշտութիւն», կամ մօտաւորապէս այդքան բան ի՞նչ իմաստ, ի՞նչ լուրջ նըպատակ ունի մարդկային կեանքը, ի՞նչ պարտականութիւններ են ծանրանում մարդու և մասնաւորապէս կնոջ վրայ—նա ի հարկէ չը գիտէ։ Նա աւարտել է գիմնազիան և մի կտոր թուղթ է ստացել։ Մի քանի տարուց յետոյ նա կ'ամուսնանայ և թիֆլիսում գրեթէ անհրաժեշտ էվոլիւցիայով կը դասնայ եւրօպացի կնոջ ծաղրանկար կամ Հաւլարարի Կէկէլօ, նայելով ո՞վ կը լինի նրա ամուսինը՝ մի գիպլօմաւոր կօսմօպօլիտ, թէ տգէտ փողատէր։

Նա հայ է, բայց հայերէն չը գիտէ և միշտ խօսում է օտար լեզուով։ Նրա անունն էլ վրացիական է—Բալի։

Վէպի հերոսը մի հայ ուսուցիչ է, «Վարժապետ» Դուք ամենք գիտէք, թէ ի՞նչ է կամ, աւելի ճիշտ ասած, ի՞նչ էր հայ վարժապետը։ Թողէք բացատրութիւնները և նկատի առէք ընդհանրութիւնը, թողէք արտաքինը և ուշք դարձրէք էութեան վրայ, և դուք կը խոստովանէք, չէք կարող չը խոստովանել, որ հայ վարժապետը, այդ յաճախ անչէնք—անշնորհք, կոշտ ու կոպիտ վարժապետը ամենալաւ, ամենահամակրելի տարրն է եղել մեր

կեանքում: Յառաջադիմութեան պիտե՛րը հայ ժողովրդի ճահ-  
ճացած կեանքում, լոյսի կարապետը մեր «խաւարի թագաւո-  
րութեան» մէջ, քաղաքակրթութեան տարածող, իսկական կուլ-  
տուր-տրէզէտը ասիական ամբոխի ամենախուլ խաւերում,  
մանուկների բարեկամը, ծնողների խորհրդատուն, ժողովրդա-  
կան թատրոնի հիմնադիրը, ժողովրդական դիակին գաղափա-  
րական շունչ տուողը, առաջնորդների ու աղանների զոհը, գա-  
ւառների «Թափառական հրէան» մի խօսքով միշտ և ամեն տեղ  
ժողովրդի շահի համար նահատակուողը—ահա հայ «վարժապետը»  
որ իր պատուաւոր տեղն ունի ամբողջ մարդկութեան ժողովր-  
դական ուսուցիչների պատուաւոր դասակարգի մէջ:

Այդպիսի մի ուսուցիչ, որին պ. Նար-Դոսը դժբախտա-  
բար օժտել է քնաւորութեան կոպտութեամբ և չօվինիստական  
զգացմունքներով, գաւառներում և նոյն իսկ Պարսկաստանում  
իր վարժապետական խաչը կրելուց յետոյ, ուսուցչութեան տեղ  
է գտնում Թիֆլիսում և սիրահարւում է իր ամնտիրոջ աղջը-  
կայ, վերեր յիշուած Բալիի վրայ: Բալին էլ փոխադարձաբար  
սիրում է նրան և սկսում է հետաքրքրուել հայերէնով, հայերէ-  
նի դասեր է առնում նրանից:

Օրիորդի հայրը ոչինչ չունի դրա դէմ, բայց մայրը, զը-  
գուելի նախապաշարունակներով ու աւանդութիւններով դաստիա-  
րակուած մի կին, լսել անգամ չի ուզում, որ իր աղջիկը կա-  
րող է դառնալ այդ «քնձոտ վարժապետի» կինը: Աղջիկը, Բա-  
լին, լալիս է, տիրում է, բայց վերջ ի վերջոյ ի հարկէ տեղի է  
տալիս մօրը, ամուսնանում է մի տգէտ փողի պարկի հետ և  
ապրում է Թամաշելի քարվանսարայի սովորական յաճախոր-  
դուհիների տիպային կեանքով,—ի բաց չառնելով և գրբացնե-  
րի, կիթխանների այցելութիւնը: Չէ որ գիմնագիայի ուսումը  
հայուհիներից շատերի համար երեսին քսած դեղի նման մի  
բան է, որ անձրևի տակ ընկնելուց յետոյ բուրոսվին գնում է,  
կեղտոտ շերտեր կազմելով դէմքի վրայ:

Բալիի տիպը, իմ կարծիքով, շատ յաջող է դուրս բերուած  
պ. Նար—Դոսի վէպիկում: Դժբախտաբար նոյնը չի կարելի ա-  
սել վէպի հերոս վարժապետի մասին: Այնպիսի վարժապետներ,  
ինչպիսին դուրս է բերել հեղինակը, ի հարկէ նոյնպէս եղել  
են կեանքում, բայց որովհետև հեղինակը ուզել է վերարտադրել  
հայ համակրելի վարժապետի տիպ, գեղարուեստական տրամա-  
բանութիւնը պահանջում է, որ նրա հերոսը լինէր աւելի մար-  
դասէր և լայն հայացքների տէր, ինչպէս եղել է հայ համակրե-  
լի վարժապետների մեծամասնութիւնը:

Այն տան բախում, որտեղ ապրում է մեր ուսուցիչը, կե-

Նում է նաև մի հարբեցող իր կնոջ հետ: Մի օր հարբեցողը սկսում է սովորականից աւելի գազանաբար ծեծել իր կնոջը: Կինը ճիչեր է արձակում, օգնութեան է կանչում: Ամբողջ բա- կի կենտոնները հաւաքում են նրանց փոքրիկ բնակարանի ա- տաջ, բայց ոչ ոք ներս չի մտնում, որովհետև բնակարանի դու- րը կողպած է և պէտք է արդեօք ասել, որովհետև այդպիսի դէպքերում ասիայի ամբոխը սիրում է ձեռնառն չէզոքութիւն պահել ուրիշների արագէդիան տեսարանի բան, «թամաշա» դարձնել: Բայց մեր ուսուցիչը այդ տիպի մարդ չէ: Բացի այդ՝ նա գիտէ որ Բալլին ներկայ է, նա ուզում է ասպետական գործ կատարել նրա առաջ: Նա ուժեղ է, նա կոտորում է դուռը, ներս է ընկնում և ազատում է խեղճ կնոջը իր գազանացած ամուսնու ձեռքից: Բայց պ, Նար—Դոսի ուսուցչի համար այդ բաւական չէ:

«Արինն աչքերս առաւ, — պատմում է նա, — առջ վաղցի, ետևից... բռնեցի նրա օձիքից և ամենայն ուժով վեա հրեցի: Ձեմ իմանում ինչպէս պատահեց, մէկ էլ տեսնեմ այդ ահազին մարդը երեսն ի վեր փռուած է յատակի վրայ իւր կնոջ կողքին: Այժմ ե՛ս սկսեցի աքացել նրան: Պէտք է որ շատ մազալու տեսարան լինէր: Սկզբում նա, երևի չանկարծակիի եկած, չէ շարժում տեղից, ոչ մի դիմողութիւն ցոյց չէր տալիս, չէր աշխատում տեղից վեր կենալ: Կարծես չէր էլ զգում աքացիներիս հարուածները որ, պէտք է ա- սած, բաւական անողորմաբար էի տալիս: Նա միայն, յատակի վրայ տարածուած, զարմանք արտայայտող աչքերով նայում էր ինձ, կարծես թէ հարցնում էր. «Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում»: Բայց չան- կարծ, կարծես, նոր ուշքի գալով, մի ուժգին շարժում գործեց և նստեց, որ վեր թռչի: Իսկոյն վրայ ընկալ, նորից պառկեցրի յա- տակի վրայ, չոքեցի կրծքին և բռնեցի կոկորդից: Երկի շատ էի պինդ հուպ տալիս, որ նա բերանը բաց էր արել, իրիւրացնում էր, աչքերը չուէլ էր, արիննով լցուած զգուելի սպիտակուցները դէմ- քիս լառած, և մարմինն էլ մի տեսակ խլրլտում էր տակս»:

Անկարելի բան է, որ համակրելի վարժապետը, ասպե- տական ձգտումով ոգևորուած ինտելիգէնտը այդպէս վայրե- նաբար, այդպէս գազանաբար վարուէր թէկուզ մի անպիտան հարբեցողի հետ և աւելի ևս անկարելի է, որ նա այդ տեսա- րանը կարողանար «մազալու» անուանել: Ի՞նչ ասպետութիւն է «անողորմաբար աքացիներ» տալ արդէն գետին փոկուած, ան- զօր դարձած մի թէկուզ զգուելի մարդու և որ համակրելի ին- տելիգէնտ մարդը կարող է այդպէս հաճոյքով նկարագրել այդ տեսարանը:

Այդ մէկը Երկրորդ գեղարուեստական սխալը, որ արել է պ. Նար—Դոս, այդ այն է, որ նրա հերոսը չովինիստ է, թթու ազգասէր, մինչդեռ հայ համակրելի ուսուցիչների մեծամասնու-

Թիւնը միշտ եղել է հայրենասէր բառի ամենալու մտքով, այսինքն սիրելով այն, ինչ որ հարադատ է իրան, սիրելով իր հայրենիքը, իր ժողովուրդը, իր մայրենի լեզուն նա ատելութիւն չի քարոզել դէպի օտարի սրբութիւնները:

Նրա հայրենասիրութիւնը հիմնուած է եղել լայն մարդասիրութեան վրայ և միշտ թշնամի է եղել օտարատեցութեան, օտարակերութեան, մարդատեցութեան: Հայ համակրելի ուսուցիչը, իբրև տիպ, երբէք թոյլ չի տուել և թոյլ չի տալ իրան արհամարհանքով վերաբերուել դէպի վրացերէնը, «ղղուելի» անուանել այդ լեզուի հնչիւնները: Ամենայն դէպս, եթէ երբեք հայ համակրելի ուսուցիչը պատահեաժողով, տանտանու բերնից թոյրել է այդպիսի խօսքեր տարայած բողբոջի, նա չէր ջանականալ, որ այդ խօսքերը կրկնուէին լրջօրէն, սպաղբուէին թղթի վրայ և մնային իբրև ազայոյց գաղափարական անտրամաբանութեան: Արովհետև եթէ մեր սէրը կենդանաբանական սէր չէ, այլ մարդկային, բանական, եթէ մենք վիրաւորում ենք արհամարհանք տեսնելով դէպի մեր մայրենի լեզուն, ոչ թէ մեր աքաղաղային բնաւորութեան պատճառով, այլ որովհետև յարգում ենք և մեր ցեղակիցների մէջ մարդկային անձաւորութիւնը.— մենք չենք կարող չը յարգել նոյնպիսի զգացմունքներ նաև ուրիշների, օտարների մէջ, մենք չենք կարող թոյլ տալ մեզ արհամարհական վերաբերմունք դէպի օտարների հաւատը, դէպի օտարների լեզուն, որոնք չէ որ նոյնպէս սրբութիւններ են այդ օտարների համար:

Տպել որևէ հայ գրքում իբրև համակրելի հերոսի բերնով արտասանուած և ուրեմն հեղինակի մտքերը արտայայտող արհամարհական խօսքեր վրացիների լեզուի, ուրեմն վրացիների սըրբութեան մասին, դա յանցանք է, որ բայի սրբապղծութիւն լինելուց, ինչպէս սրբապղծութիւն է վրացիների արհամարհական վիրաբերմունքը դէպի մեր նուիրական տունձնայատկութիւնները, նաև մեծ քաղաքական սխալ է:

Ծիծաղելի է և նոյն իսկ զղուելի, երբ ոուս արիստոկրատը արհամարհելով իր զիպելիկ մայրենի լեզուն միշտ խօսում է ֆրանսերէն, որ աւելի ևս զիպելիկ լեզու է, բայց համ ու հոտից զուրկ է նրա բերնում, սակայն միթէ այդ իրաւունք է տալիս որ և է ուստի արհամարհական լեզու բանեցնել ֆրանսերէնի վիրաբերմամբ:

Բացի այդ պակասութիւններից պ. Նար—Դոսի վէպիկը ունի նաև այն պակասութիւնը, որ մի քիչ ճապաղ է, ինչպէս ռուսացիների գրեթէ բոլոր վիպտական գրուածքները:

Վէպը արձանագրութիւն չէ, Ընթերցողի երևակայութիւնը

միշտ աւելի թոյլ է, քան վիպասանների երեակայութիւնը և եթէ նրանց գրուածքում պատկերները խտացած չեն, ազօտ են, ընթերցողի երեակայութեան վրայ նրանք ազդել չեն կարող: Գեղարուեստական գրուածքը պէտք է խտացրած, իր մէջ մեծ քանակութեամբ ոյժեր պարունակող մակարդ (Ֆէրմէ:տ) լինի, որպէս զի կարողանայ ընթերցողի սովորական, միջակ երեակայութիւնը եւ բերելով՝ վերարտադրել նրա մէջ որքան կարելի է վառ պատկերների մի շարք և նրանց ազդեցութեան տակ զգացմունքների ոգևորութիւն: Բանաստեղծի մի պատկերը, մի նախադասութիւնը պէտք է լինի այն մի պաղունց մակարդը որ մածուն է դարձնում մի ամբողջ աման կաթ, մինչդեռ հայ, մանաւանդ ուսանայ վիպասանները մակարդի տեղ սովորաբար մեզ տալիս են միմիայն մածնաջուր, շիճուկ: Մեծ մասամբ անզօր ու անհամ:

Տ. Յ.

10) Les souffrances du peuple arménien et le devoir de l'Europe: Ed. Bernstein. (Հայ ժողովրդի տառապանքները և եւրոպայի պարտականութիւնը. եղ. Յերնշտայն):

Ներկայ տարուայ յունիսի 26-ին Բերլինում գերմանական ուսյխտագի անդամ և յայտնի սոցիոլոգ էդ. Բերնշտայն մի հրապարակական դասախօսութիւն կարդաց նուիրուած թիւրքահայ ժողովրդի դատին: Ահա այդ դասախօսութիւնն է, որ ֆրանսերէն լեզուով հրատարակել են հայ ժողովրդի Եւրոպայում ապրող բարեկամները, անշուշտ ի նկատի ունենալով նախ այն, որ առաջին անգամն էր Գերմանիայում տեղի ունենում մի այդպիսի դասախօսութիւն և երկրորդ այն՝ որ խօսողը այն հեղինակութիւններից է, որոնց ձայնը և կարծիքը արժանի է խորին ուշադրութեան: Վերջին տարիները թիւրքահայ ժողովրդի տառապանքների մասին շատ է գրուել և շատ է խօսուել եւրոպական զանազան կրկրներում, ուր պատրաստուել և հասունացել է մտաւորապէս այն կարծիքը, թէ մարդկութեան խղճի վրայ ծանրացած մի խոշոր պարտականութիւն է վերջ տալ հեռուոր արեւելքում մի չափն անցած բռնութեան տակ հեծող քրիստոնեայ ժողովրդի մարտիրոսութեանը: Տարբարողաբար Գերմանիան, քաղաքական և մտաւոր Գերմանիան, կատարուած արիւնալի փաստերի առաջ մի լուծիւն պահպանեց, որ մի քաղաքակիրթ և հզօր ազգի պատիւ չէր կարող բերել: Ամօթալի